«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2017 թվականի

«Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»** հարցը (զեկուցող՝ ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Ա.Նազարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. դեկանատը և ամբիոնները զգալի աշխատանք են իրականացրել ՀՊՏՀ 2016-2020 թթ. ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, ուսումնական գործընթացը համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին ու հանձնարարականներին համապատասխան կազմակերպելու, ուսումնական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ուսումնական տարվա սկզբից ֆակուլտետի մասնաշենքում հիմնականում ավարտվել էին ծավալուն հիմնանորոգման աշխատանքները և ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված դասատախտակին ու ժամանակացույցին համապատասխան:

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թիվը բոլոր կրթաձևերում կազմել է 1154, որից ավարտական կուրսերի ուսանողներինը՝ 320, (այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորմանը չի մասնակցել 4 ուսանող): Նախորդ տարիներից պարտք ունեցող 2 ուսանող մասնակցել է ամփոփիչ ատեստավորմանը և ավարտել բուհը: 2017 թ. հուլիսի 1-ի դրությամբ ուսանողների թիվը 834 է:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 76.7%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 88.89%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 60.7%, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 86.36%:

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել և ավարտական աշխատանքներ են պաշտպանել 155 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմ են ստացել 53-ը: Առկա ուսուցման մագիստրատուրան թողարկել է 75 շրջանավարտ, որից գերազանցության դիպլոմ են ստացել 13-ը, իսկ հեռակա բակալավրիատի 86 շրջանավարտներից գերազանցության դիպլոմ է ստացել 1 ուսանող:

Ամփոփիչ ատեստավորմանը չեն մասնակցել առկա մագիստրատուրայում՝ 3 և հեռակա բակալավրիատում՝ 1 ուսանող:

ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործողություններից 2016-2017 թթ. ֆակուլտետում իրականացվել են.

1. **Կրթական գործընթացի բարեփոխումներ**

Այս ուղղությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից 2014 թ. հաստատված մասնագիտությունների ցանկում ֆակուլտետում բակալավրիատի՝ մինչ այդ եղած մասնագիտություններից ներառվել է միայն «Տնտեսագիտություն» մասնագիտությունը, և արդեն 2015 թվականից սկսվել է հիշյալ մասնագիտության կրթական ծրագրի մշակման գործընթացը՝ հիմնված ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակով սահմանված չափորոշիչների և միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

Գործընթացը ներառել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հարցումների ամփոփումն ու մշակվել է բուհի «Կրթական ծրագրեր կազմելու ուղեցույցի» հիման վրա:

Արդեն 2016-2017 ուստարվա ընդունելությունը կազմակերպվել է նոր՝ **«Տնտեսագիտություն»** կրթական ծրագրով՝ տնտեսագիտության բակալավրի որակավորումով:

Տվյալ ուստարում բակալավրիատի առկա ուսուցման համակարգ ընդունվել է 201 ուսանող, որից 184-ը՝ վճարովի ուսուցման համակարգում, 17-ը՝ պետպատվերի համակարգում: Ավելի ուշ, ՀՀ ԿԳ նախարարի հրամանով, բուհի միջոցների հաշվին, 100% փոխհատուցմամբ անվճար ուսուցման համակարգ են տեղափոխվել վճարովի ուսուցման համակարգում հրամանագրված 2 առավել բարձր միավորներ ունեցող ուսանողներ: Հեռակա ուսուցման բակալավրիատ ընդունվել է 30 ուսանող:

2016-2017 ուստարվա ընթացքում ներքին փորձաքննության արդյունքում «Տնտեսագիտություն» մասնագիտության կրթական ծրագրում կատարվել են լրամշակումներ և փոփոխություններ, և 2017-2018 ուստարվա ընդունելությունը կազմակերպվել է փոփոխված կրթական ծրագրով:

Բացի դրանից, հաշվետու տարում բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի կողմից մշակվել է **«Բնապահպանություն և բնօգտագործում»** մասնագիտության կրթական ծրագիրը՝ շրջակա միջավայրի բակալավրի որակավորումով և ներառվել 2017-2018 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկում:

2016-2017 ուստարվա ընթացքում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակով սահմանված չափորոշիչների և միջազգային փորձի ուսումնասիրության վրա միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի կողմից մշակվել և ներքին փորձաքննության է ներկայացվել **«Միջազգային տնտեսագիտություն»** կրթական ծրագիրը:

Կրթության բարեփոխումների առումով հարկ է փաստել, որ 2016-2017 ուստարին հաջողված էր նաև գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման տեսանկյունից: Ամբիոնները շարունակել են աշխատանքները իրենց գիտահետազոտական թեմաների շրջանակներում:

Ֆակուլտետի դասախոսների կողմից 2016-2017 ուստարում հրատարակվել են 4 ուսումնական ձեռնարկ, 4 մենագրություն, 126 գիտական հոդված, որից 29-ը՝ միջազգային գրախոսվող ամսագրերում և 6 մեթոդական ուղեցույց:

Ֆակուլտետի ամբիոնները կազմակերպել են բաց դասեր մագիստրանտների համար որոշակի թեմաների շրջանակներում՝ պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ:

2. Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ֆակուլտետի հիմնական հաստիքային դասախոսների թիվը 74 է, որից՝ 8 դոկտոր, պրոֆեսոր, 2 դոկտոր, դոցենտ, 3 դոցենտ, պրոֆեսոր, 40 թեկնածու, դոցենտ, 1 դոցենտ, 20 ասիստենտ և դասախոս:

Ֆակուլտետի թողարկող ամբիոններն ունեն 29 ասպիրանտ և 12 հայցորդ: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի 1 տնտեսագիտության թեկնածու, դոցենտ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 7 ասպիրանտ և 3 հայցորդ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ Տ.Վարդանյանը մասնակցել է ՀՀ գիտության պետական կոմիտեի «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2016» մրցույթին և շահել է **«Աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները (ՀՀ օրինակով)» թեմայով** դրամաշնորհային ծրագիրը:

3. Գործունեության միջազգայնացում

Ընդհանրապես, ֆակուլտետի միջազգայնացման գործընթացն իրականացվում է բուհի միջազգայնացման գործընթացի տրամաբանությամբ և դրա շրջանակներում: Մասնավորապես՝ 2016-2017 ուստարում ֆակուլտետի 2 ուսանողներ (1 մագիստրանտ և 1 բակալավր) «Էրասմուս+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառել են եվրոպական տարբեր բուհերում: «Էրասմուս+» շրջանակներում Խորվաթիայում վերապատրաստվել է բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի 1 ասպիրանտ: Նույն «Էրասմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում դասախոսություններով հանդես են եկել ֆակուլտետի 5 դասախոսներ, իսկ եվրոպական տարբեր բուհերի դասախոսներ հյուրընկալվել են ՀՊՏՀ-ում և դասախոսություններով հանդես եկել ֆակուլտետի ուսանողների համար:

Ֆակուլտետի 2 դասախոս վերապատրաստվել է Ֆրանսիայի ՊԵԲԵՈ ընկերությունում:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչը Լիոնում մասնակցել է Կլիմայի գլոբալ տաքացմանը նվիրված միջազգային կոնֆերանսին: Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են նաև ՌԴ-ում և Ուկրաինայում կազմակերպված միջազգային կոնֆերանսներին:

4. Ռեսուրսային ապահովվածություն

Ֆակուլտետի լսարանային ֆոնդն ամբողջությամբ բավարարում է ուսումնական գործընթացը ֆակուլտետի մասնաշենքում կազմակերպելու համար: Ֆակուլտետում առկա է համակարգչային տեխնիկայով ու պրոյեկտորով (կամ Smart գրատախտակով) համալրված 5 լսարան: Ընդ որում, դրանցից երկուսը կահավորվել է 2016-2017 ուստարում: Վերջին տարիներին ֆակուլտետի լսարանները նորոգվել են, իսկ 2017 թվականի ընթացքում կահավորվել է 2 լսարան, ինչն առավել հարմարավետ է դարձրել ուսումնական գործընթացը:

5. Կառավարման բարելավում ու ընթացակարգերի մշակում

2016-2017 ուստարում մշակվել ու գիտական խորհրդի կողմից հաստատվել է ֆակուլտետի նոր կանոնադրությունը: Բացի դրանից, ֆակուլտետի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել բուհի գործունեության տարբեր գործընթացների կանոնակարգերի ու ընթացակարգերի մշակմանը (ՀՊՏՀ դասախոսների վարկանշավորման կարգ, ՀՊՏՀ վարչական աշխատակիցների աշխատանքի գնահատման կարգ, ՀՊՏՀ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման կարգ և այլն):

Միաժամանակ, առկա են որոշակի թերություններ և բացթողումներ ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման, կրթության նոր մեթոդների կիրառման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների կատարման գործում: Այսպես՝ դեռևս բավարար մակարդակի վրա չէ գործնական, լաբորատոր պարապմունքների և ուսանողների հետ կատարվող անհատական աշխատանքների որակը: Միևնույն ժամանակ, ամբիոնները դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման ժամանակ դեռևս ամբողջությամբ չեն հիմնվում ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման վրա: Դեռևս շարունակվում են թերությունները նաև ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ղեկավարման, կարծիքների տրամադրման և գրախոսությունների մասով: Ղեկավարների կարծիքները, գրախոսությունները շատ հաճախ ձևական բնույթ են կրում՝ դժվարացնելով գնահատման գործընթացը, ինչը արձանագրվել է նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից:

Արձանագրված խնդիրներ.

1. Դասավանդման որակի ու մեթոդների, ուսանողներին մատուցվող նյութի և մատուցման եղանակների հետ կապված խնդիրներ, որոնք հատկապես ակնառու են մագիստրատուրայում:
2. Ամբիոններում արտաքին ֆինանսավորմամբ գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերի գրեթե բացակայություն:
3. Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, դրանցում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության, ձեռքբերված տեսական արդյունքները դասավանդման պրակտիկայում գործադրման խնդիրներ:
4. Մագիստրոսական կրթության կազմակերպման խնդիրներ:
5. Հեռակա ուսուցման բակալավրիատում առաջադիմության խնդիրները:
6. Ուսումնաարտադրական փորձառության կազմակերպման ու անցկացման հետ կապված խնդիրներ:
7. Ֆակուլտետի գործունեության միջազգայնացմանն ուղղված հիմնախնդիրներ, մասնավորապես՝
   1) ցածր է ակադեմիական փոխանակումների և միջազգային այլ ծրագրերում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության մակարդակը: Ակադեմիական փոխանակման գործընթացի լիարժեք իրականացման համար դեռևս լուրջ խնդիր է օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը.

2) ֆակուլտետի դասախոսների և վարչական աշխատողների՝ օտար լեզուների իմացության անբավարար մակարդակը դառնում է ոչ միայն միջազգային շփումների զարգացումը խոչընդոտող գործոն, այլև նվազեցնում է ֆակուլտետի գրավչությունն արտասահմանցի ուսանողների համար:

8. Դասամատյանների վարման, գիտելիքների գնահատման ամփոփաթերթերում նշումների անսխալ գրանցման, ուսանողների ընթացիկ ակտիվության ճիշտ հաշվարկման խնդիրներ:
9. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և դրանց վերաբերյալ կարծիքների տրամադրման և գրախոսությունների որակի հետ կապված խնդիրներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ֆակուլտետի դեկանատին՝**

1) ակտիվացնել աշխատանքները ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման ուղղությամբ՝ ապահովելով պրոֆեսորադասախոսական կազմի առավել լայն ընդգրկվածությունն այդ աշխատանքներում.
2) ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետում վարվող կադրային քաղաքականության, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժեշտ հմտություններ ունեցող կադրերին.
3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները.
4) ակտիվացնել աշխատանքները մագիստրատուրայում դասավանդող դասախոսների ընտրության և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու, ինչպես նաև մատուցվող նյութի որակը բարձրացնելու ուղղությամբ.
5) հետևողական աշխատանք իրականացնել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացի ուղղությամբ: Յուրաքանչյուր դասաձախողման դեպք դարձնել առանձին քննարկման առարկա.
6) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները.
7) ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել ամբիոններում և ֆակուլտետում միջազգայնացմանը վերաբերող հարցեր.

8) ակտիվացնել ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակադեմիական շարժունության ծրագրերին.
9) ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, կատարման, ղեկավարման և գրախոսման արդյունավետության բարձրացման նպատակով մշակել առաջարկությունների փաթեթ և մինչև սույն թվականի սեպտեմբերի 10-ը ներկայացնել ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը.
10) ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների արդյունավետության բարձրացման նպատակով, ինչպես նաև նոր կրթական ծրագրերի պահանջների ելնելով՝ շարունակական կրթության և կարիերայի բաժնի հետ համատեղ մշակել ընթացակարգեր և մինչև 2017 թ. հոկտեմբերի 1-ը ներկայացնել ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը.
11) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին:

3. «Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչներին՝

1) մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների համար մշակել կրթական ու առարկայական նոր ծրագրեր՝ ՀՊՏՀ կրթական ծրագրերի մշակման ուղեցույցի պահանջներին համապատասխան.
2) քննարկել 1,5 տարվա տևողության մագիստրոսական ծրագրերի իրականացման հնարավորությունները՝ դրանցում ընդգրկելով գործատուներին, առաջարկություններ ներկայացնել գործող մագիստրոսական ծրագրերի վերանայման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ (ժամկետ 01.10.2017 թ.).
3) ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով ապահովել ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի սահուն սերնդափոխություն՝ կարևորելով կադրերի ոչ միայն գիտահետազոտական, այլև մանկավարժական ունակությունները.
4) երիտասարդ դասախոսների լսարան մուտքի նախապատրաստման նպատակով մշակել և գործադրել միջոցառումներ փորձառու դասախոսների գիտահետազոտական և մանկավարժական հմտությունների և կարողությունների փոխանցման համար: Այդ նպատակով փոփոխություններ կատարել ասպիրանտների և հայցորդների անհատական պլաններում.
5) ակտիվացնել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը.
6) խրախուսել «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը.
7) ապահովել կրթական և առարկայական ծրագրերի՝ առաջավոր արտասահմանյան համալսարանների ծրագրերի հետ համապատասխանությունը.

8) ապահովել ակադեմիական փոխանակության ծրագրերով արտասահմանյան համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում.
9) ըստ մասնագիտացման՝ համալսարանում հյուրընկալվող արտասահմանյան համալսարանների դասախոսների հետ հաստատել սերտ և տևական կապեր՝ համատեղ հետազոտությունների իրականացման, համահեղինակությամբ հոդվածներն արտասահմանում կամ Հայաստանում հրատարակելու նպատակով.
10) խրախուսել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վարման նոր, ժամանակակից արդիական ու արդյունավետ մեթոդների կիրառումը.
11) հեռակա ուսուցման բակալավրիատում առաջադիմությունը բարձրացնելու նպատակով (դասավանդման մեթոդի, հանձնարարությունների վերանայում և նոր ձևաչափի սահմանում) մշակել համալիր միջոցառումներ և ներկայացնել ֆակուլտետի խորհրդի քննարկմանը.
12) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները, բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակն ու որակը.
13) 2017-2018 ուսումնական տարվա առաջին ամբիոնի նիստում քննարկել և հաստատման ներկայացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ցանկը.
14) պարբերաբար վերանայել ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների ծրագրերը (խոշոր գործատուների պարագայում համաձայնեցնելով նրանց հետ), պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության անցկացման վայրի ընտրության և ուսումնասիրությունների ընտրված ուղղությանը վերջինիս համապատասխանության նկատմամբ.
15) փորձառությունների արդյունավետ կազմակերպման նպատակով բանակցություններ վարել գործատուների հետ և մինչև 2017 հոկտեմբերի 15-ը շարունակական կրթության և կարիերայի բաժին առաջարկություններ ներկայացնել փորձառությունների հնարավոր վայրերի, իսկ անհրաժեշտության դեպքում նոր պայմանագրերի կնքման վերաբերյալ:

4. Սույն որոշումը քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականներն իրականացնելու համար:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին, Գ.Ի.Վարդանյանին և Ս.Ս. Խաչատրյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

04.07.2017 թ.